

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեական աշխարհի մեծագույն տոներից մեկն է Ստեփանոս Նախավկայի տոնը: Ինչպես միշտ, այս տարի ևս մեծ շուքով նշվեց առաջին կարապետի տոնը Ս. Էջմիածնում: Առավոտյան ժամը 11-ին Մայր տաճարի Ավագ խորանի վրա, տոնական ս. պատարագ մատուցեց հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

Ս. Գրական ընթերցումներից առաջ սկսվեց սարկավագական ձեռնադրությունը:

Նորընծաները իրենց կիսասարկավագական կոչումն ստացել էին նախորդ օրը, դեկտեմբերի 24-ին: Նույն օրը տեղի էր ունեցել նաև հոգևոր ճեմարանի մի խումբ ուսանողների դպրության չորս աստիճանների տվչության արարողությունը:

Ձեռնադրությունը խորհրդանշվեց վկայակոչությամբ՝ «Աստուածա ին եւ երկնային շնորհ, որ միշտ լինու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զնոսա ի դպրութենէ ի սարկաւագութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց եւ ամենայն ժողովրդեան»:

Այնուհետև օրվա պատարագիչ սրբազանը օրհնությամբ տվեց «զսուրբ ուրարս», «իշխանութիւն ընթեռնուլ զսուրբ Աւետարանս, յեկեղեցիս Աստուծոյ» և «հրաման խնկարկել և բուրել հոտ անուշութեան ի սպասաւորութիւն խորհրդոյն»:

Ձեռնադրության արարողության ավարտից հետո սրբազան հայրը նորընծաներին ուղղված բարեմաղթություններ ու խրատական խոսքեր ասաց:

Հավարտ ս. պատարագի, հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի և Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի ուղեկցությամբ նորընծաները եղան Վեհարանում, ուր Նորին Սրբությունը մեծ ուրախությամբ ընդունեց իր հոգևոր զավակներին, շնորհավորանքի խոսք ասաց, օրհնեց նրանց հոգևոր ծառայության ուխտը և մաղթեց, որ լինեն Հայ Եկեղեցու արժանի սպասավորները:

Միրզախանյան Գարեգին.— Ծնվել է 1961 թ.-ի նոյեմբերի 22-ին Իրանում: 1969 թ.-ին ընտանիքով վերադարձել են հայրենիք: 1970—80 թթ. սովորել և ավարտել է Հոկտեմբերյանի № 1 միջնակարգ դպրոցը: 1980 թ.-ին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1984—87 ուս. տարում սովորել և ավարտել է Երևանի ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկումը: 1988 թ.-ից ուսումը շարունակում է հոգևոր ճեմարանում:

Արամյան Գևորգ.— Ծնվել է 1958 թ.-ի մարտի 18-ին Էջմիածնի Ոսկեհատ գյուղում: 1965—1973 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1973 թ.-ին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այնուհետև ծառայել է Երևանի Ս. Գևորգ եկեղեցում: 1988 թ.-ից ուսումը շարունակում է հոգևոր ճեմարանում:

Գրիգորյան Հովհաննես.— Ծնվել է 1958 թ.-ի մարտի 12-ին Լենինականում: 1965—75 թթ. սովորել և ավարտել է Երևանի № 38 միջնակարգ դպրոցը: 1977—82 ուս. տարում սովորել և ավարտել է Երևանի

Վալերի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի անգլերեն լեզվի մասնաճյուղը: 1986 թ.-ին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Աբրահամյան Գագիկ.— Ծնվել է 1965 թ.-ի հոկտեմբերի 3-ին Էջմիածնում: 1972—82 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի № 7 միջնակարգ դպրոցը: 1982 թ.-ին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1983—85 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ծառայությունն ավարտելուց հետո ուսումը շարունակում է հոգևոր ճեմարանում:

Աբելյան Տիգրան.— Ծնվել է 1966 թ.-ի հունիսի 28-ին Հոկտեմբերյանում: 1973—83 թթ. սովորել և ավարտել է տեղի № 2 միջնակարգ դպրոցը: 1983 թ.-ին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1985—87 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ծառայությունն ավարտելուց հետո ուսումը շարունակում է հոգևոր ճեմարանում:

Զոհրաբյան Հերոս.— Ծնվել է 1965 թ.-ի հունիսի 25-ին Թեհրանում (Իրան): 1972 թ.-ին ընտանիքով վերադարձել են հայրենիք: 1972—81 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի № 1 միջնակարգ դպրոցը: 1983 թ.-ին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Նազարյան Սերժիկ.— Ծնվել է 1966 թ.-ի հուլիսի 1-ին Թեհրանում (Իրան): 1970 թ.-ին ընտանիքով վերադարձել են հայրենիք: 1973—83 թթ. սովորել և ավարտել է տեղի № 4 միջնակարգ դպրոցը: 1983 թ.-ին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1984—86 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ծառայությունն ավարտելուց հետո ուսումը շարունակում է հոգևոր ճեմարանում:

Գեումեխյան Մարսելո.— Ծնվել է 1971 թ.-ի հոկտեմբերի 8-ին Սան-Պաուլո (Բրազիլիա) քաղաքում: 1977—85 թթ. սովորել է Բուենոս Այրեսի Խրիմյան կրթական մասնաճյուղում: 1985 թ.-ից սովորում է Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

Գալոյան Տիրան.— Ծնվել է 1966 թ.-ի հուլիսի 13-ին Բաքու (Ադրբեջան) քաղաքում: 1973—83 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի № 5 միջնակարգ դպրոցը: 1984 թ.-ին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1986—88 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ծառայությունն ավարտելուց հետո ուսումը շարունակում է հոգևոր ճեմարանում:

Քիրեմիջյան Օննիկ.— Ծնվել է 1968 թ.-ի դեկտեմբերի 21-ին Բեյրութում (Լիբանան): 1975—81 թթ. սովորել է տեղի Ազգային Արամյան նախակրթական վարժարանում: Այնուհետև սովորել է Թեքեյան-Հովակիմյան վարժարանում: 1985 թ.-ից սովորում է հոգևոր ճեմարանում:

Գանջումյան Դավիթ.— Ծնվել է 1958 թ.-ի հոկտեմբերի 26-ին Յաշի (Ռումինիա) քաղաքում: 1965—74 թթ. սովորել է տեղի № 4 միջնակարգ դպրոցում: 1974—78 ուս. տարում սովորել և ավարտել է տեղի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1978—80 թթ. ծառայել է ռումինական բանակում: 1985 թ.-ից սովորում է հոգևոր ճեմարանում:

Տալյան Գրիգոր.— Ծնվել է 1947 թ.-ի հունվարի 2-ին Երևանում: 1955—65 թթ. սովորել և ավարտել է տեղի Կալինի անվան դպրոցը: 1972—75 ուս. տարում սովորել և ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մշակույթի մասնաճյուղը: 1988 թ.-ից սովորում է հոգևոր ճեմարանում:

Հարությունյան Կարդոս.— Ծնվել է 1961 թ.-ի հուլիսի 21-ին Սուխումի (Վրաստան) քաղաքում: 1968—78 թթ. սովորել և ավարտել է Թբիլիսիի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցը: 1978—83 ուս. տարում սովորել և ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիշերաբաժնի մասնաճյուղը: 1983—85 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1988 թ.-ից սովորում է հոգևոր ճեմարանում:

Տինգիյան Հակոբ.— Ծնվել է 1954 թ.-ի դեկտեմբերի 19-ին Այեքսանդրիա (Եգիպտոս) քաղաքում: 1960 թ.-ին ընդունվել է տեղի Պողոսյան վարժարան: 1969 թ.-ին ընտանիքով տեղափոխվել են ԱՄՆ: 1972—75 թթ. սովորել է Օհայոյի հանալուսառանի ինժեներա-քիմիական մասնաճյուղում: 1987—89 թթ. սովորել և ավարտել է Ս. Ներսես ընծայարանը և ստացել Աստվածաբանության Մագիստրոսի կոչում: 1989 թ.-ից սովորում է հոգևոր ճեմարանում:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա սարկավագներին՝ մաղթելով նրանց անմնացորդ նվիրում ի սպասավորություն Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: